## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

*Ամենայն Հայոց Հայրապետի Օծման տարեդարձի առիթով, հետեւեալ հեռագիրը յղուած է Մայր Աթոռ.—*

Երուսաղէմ, 2 Հոկտեմբեր 1984

Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին

Ձեր Սրբութեան գահակալութեան եւ օծման 29րդ տարեդարձին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Սաղիմահայ համայնքի ջերմագին շնորհաւորութիւնները, երկար ու եղանիկ օրերու լաւագոյն բարեմաղթութիւններով հանդերձ:

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՍ. ՏԷՐՏԷՐԵԱՆ
Պատրիարք Հայոց Երուսաղէմի

---

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ–ԲԵՄԱԿԱՆՔ

● *Բշ. 1 Հոկտ.* — Յիշատակ մեռելոց: *Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Ռաֆֆի Վրդ. Որդիքեան: Այս, Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկ. նախագահեց հոգեհանգստեան պաշտամունքին, որ կրկնուեցաւ գաւիթը, Երանաշնորհ Տ. Կիւրեղ Պատրիարքի շիրմին մօտ:*

● *Եշ. 4 Հոկտ.* — Տօն Խաչի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Ցովակիմեան:*

● *Կիր. 7 Հոկտ.* — Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի պահոց: *Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան:*

● *Ուր. 12 Հոկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:*

● *Շբ. 13 Հոկտ.* — Ս. Գէորգայ զօրավարին: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգայ վանքի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Երթուդարձի թափօրները գլխաւորեց Գեր. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան: Այս Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Եպիսկոպոսական Փոխանորդէն:*

*— Կէսօրէ ետք, Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը Ներքնաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնատան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ: Այս կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:*

● *Կիր. 14 Հոկտ.* — Տօն Վարագայ Ս. Խաչին: *Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ, իսկ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գեթսեմանիին վրայ: Ժամարարն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.: Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա.ի Օծման 29րդ տարեդարձի առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:*

● *Շբ. 20 Հոկտ.* — Ս. 72 աշակերտացն Քրիստոսի: *Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւիթը՝ Ս. Գէորգայ սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Ցովակիմեան:*

● *Կիր. 21 Հոկտ. — Այսօր կատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ վանքէն տարեկան ուխտագնացութիւնը: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան: Բաւական ժողովուրդ եկած էր Երուսաղէմէն, Եաֆայէն, Հայֆայէն:*

● *Ուր. 26 Հոկտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:*

● *Շբ. 27 Հոկտ.* — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց (Տօն ազգային եւ եկեղեցական): *Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Տեսուչը՝ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան: Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցելոց համար կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան:*

● *Կիր. 28 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան:*

● *Շբ. 3 Նոյմ.* — Ս. Չորից Աւետարանչացն: *Քանի որ դարէ ի վեր առաջին անգամ ըլլալով, այս տարի կարելի եղաւ այս տօնին Ս. Պատարագ մատուցանել Ս. Յարութեան տաճարի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ, գաւիթը շինանիւթերէ պարպուած եւ մատրան նորոգութիւնը աւարտած ըլլալով: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:*

● *Կիր. 4 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:*

digitised by A.R.A.R.@

● Բշ. 5 Նոյմ. — Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան:

● Շբ. 10 Նոյմ. — Ս. Երկոտասան վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գըլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէրպէթճեան:

● Կիր. 11 Նոյմ. — Գիւտ Խաչ: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտըւեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան: Ապա կազմուեցաւ մեծահանդէս Թափօր, որ նախ իջաւ Գիւտ Խաչի այրը և ապա բարձրանալով Ս. Գերեզմանին շրջափակը, Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ — որ ամպհովանիի տակ՝ Կենաց Փայտի մասունքն ունէր ի ձեռին — երիցս Թափօր դարձաւ: Հանդիսութիւնները վերջ գտան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

● Շբ. 17 Նոյմ. — Տօն Ամենայն Սրբոց: Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէրպէթճեան:

● Կիր. 18 Նոյմ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան:

● Ուր. 23 Նոյմ. — Նախատօնակը պաշտըւեցաւ ի Ս. Հրեշտակապետս: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Շբ. 24 Նոյմ. — Տօն Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի և պարագայից հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգիստին նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Կիր. 25 Նոյմ. — Դարձեալ առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետս, իսկ Ս. Պատարագը մատոյց, ըստ սովորութեան, մատոյց նոյն վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան:

● Շբ. 1 Դեկտ. — Առաք. Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

● Կիր. 2 Դեկտ. — Բարեկենդան Յիսնակի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ.:

● Բշ. 3 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Գշ. 4 Դեկտ. — Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Սրբազանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան՝ եպիսկոպոսական զգեստաւորմամբ: Ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ աւգին և Ս. Աթոռոյս բարերար Կիւլլապի Կիւլպէնկեանի և իր գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար:

● Շբ. 8 Դեկտ. — Ս. Նիկողայոսի սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան: Վերաբերումը կատարուեցաւ գաւթի՝ Ս. Նիկողայոսի սեղանին վրայէն:

● Կիր. 9 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

● Ուր. 14 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Շբ. 15 Դեկտ. — Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Տէրպէթճեան:

● Կիր. 16 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Աբղ. Ալճանեան:

● Ուր. 21 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Շբ. 22 Դեկտ. — Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթսեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Գերշ. Հանդիսապետը:

● Կիր. 23 Դեկտ. — Բարեկենդան Ս. Յակոբայ պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ոսկի Վրդ.:

● Ուր. 28 Դեկտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Շբ. 29 Դեկտ. — Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարար՝ Հոգշ. Տ. Վանիկ Վրդ.:

● Կիր. 30 Դեկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնատան մատրան մէջ: Ժամարար՝ Տ. Համբարձում Վրդ.:

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Կիր. 7 Հոկտ. — Քաղաքիս Հայ-Կաթողիկէ համայնքի հովիւ Գերյ. Յովսէփ Ծ. Վրդ. Ճառտարեանի պաշտօնով Պէյրութ փոխադրուելուն և Գերյ. Յովսէփ Ծ. Վրդ. Թուտեանի այդ պաշտօնը ստանձնելուն առիթով, իրենց եկեղեցիին մէջ կատարուած հանդիսութեան ներկայ գտնուեցան Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէլեան և Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. Գալէմքեարեան։

— Կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Գուսան Աբեղայ ներկայ եղաւ Rosary Sistersի հիմնադրութեան 100ամեակի առիթով Լատինաց Պատրիարքի կողմէ Մայրապետանոցի եկեղեցիին մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և յաջորդող ընդունելութեան։

● Ուր. 12 Հոկտ. — Սպանիոյ ազգային տօնին առիթով, Սպանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս., Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Սեւան Վրդ. և Քարտուղար Տիար Գ. Հինդլեան։

● Կիր. 14 Հոկտ. — Կէսօրէ ետք, Հրէից Սուքքօթի (Տաղաւարահարաց) տօնին առթիւ, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Դաւթի բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան։

● Դշ. 16 Հոկտ. — Զբօսաշրջութեան Նախարար Իցհաք Ռապինի կողմէ, Իսրայէլ այցելող Միացեալ Նահանգաց Զբօսաշրջութեան Նախարար Գասպար Ռոյնպէրկէրի ի պատիւ Թել Ավիվի մէջ տրուած ընթրիքին ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Բշ. 22 Հոկտ. — Երեկոյեան, Ն. Սրբութիւն Յովհաննէս-Պօղոս Բ. Պապի գահակալութեան 6րդ տարեդարձի առիթով, Նոթր-Տամի հիւրանոցի մատրան մէջ, Պապական Նուիրակ Մօնս. Քարլօս Քիւրիսի նախագահութեամբ կատարուած «Մաղթանքներին» և յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Հոգշ. Տ. Սեւան Վրդ. և Տիար Գ. Հինդլեան։

● Եշ. 25 Հոկտ. — Երեկոյեան, Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Ա. Պատրիարքի կողմէ, իր անուան տօնին առթիւ և Ս. Երկիր այցելող Աթէնքի Քաղաքապետին ի պատիւ, Համբարձման լերան Գալիլիոյ վանքին մէջ տրըուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս., Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Սեւան Վրդ. և Տիար Հինդլեան։

● Դշ. 31 Հոկտ. — Երեկոյեան, Reformation Dayի առիթով, Լուտերական եկեղեցւոյ մէջ կատարուած պաշտամունքին և յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Սեւան Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Ուր. 2 Նոյմ. — Ամերիկահայոց Արեւելեան Թեմի բազմամեայ Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան կարճատեւ այցելութեամբ ժամանեց Ս. Աթոռ։

● Դշ. 28 Նոյմ. — Փարիզի Նորընտիր Առաջնորդ Գերշ. Տ. Գիւտ Եպս. Նագդաշեան հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ և, իր դիմումին վրայ, ընդունուեցաւ Միաբան Ս. Աթոռոյս — Մեկնեցաւ շաբաթ մը ետք։

● Ուր. 30 Նոյմ. — Երեկոյեան, Սկովտական եկեղեցւոյ մէջ, St. Andrew's Dayի առթիւ կայացած պաշտամունքին և յաջորդող ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Գիւտ Եպս., Հոգշ. Տ. Բարսեղ Վրդ. և Տիար Գէորգ Հինդլեան։

● Շբ. 8 Դեկտ. — Փարիզի Քաղաքապետ Ժագ Շիրակի Իսրայէլ այցելութեան առիթով, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. դիմաւորութեան գնաց օդակայան։

● Կիր. 9 Դեկտ. — Ֆրանսայի Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Փարիզի Քաղաքապետ Ժագ Շիրակի ի պատիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Տիար Գէորգ Հինդլեան։

● Դշ. 19 Դեկտ. — Երեկոյեան, Հրէից Խանուկայի (Մակաբայեցւոց) և Քրիստոնէից մօտալուտ Ս. Ծննդեան տօներուն առիթով, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, Քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գաբրիէլեան, Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան և Տիար Գ. Հինդլեան։

● Դշ. 26 Դեկտ. — Եւրոպացւոց Ս. Ծննդեան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, շնորհաւորական այցելութեան գնաց Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքին և Ֆրանչիսկեաններու Գերշ. Կիւսթոսին։ Ապա, Աւագ Թարգման Հոր հեստ, այցելեց Պապական Նուիրակին և Անկլի- քան Արքեպս.ին։ Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. այցելեց Յոյն-Կաթոլիկներու և Լուտերականներու Եպս.ներուն, իսկ Հոգշ. Տ. Սեւան Վրդ.՝ Հայ և Ասորի Կաթոլիկ՝ ինչպէս նաև Մարոնիթ համայնքի Մեծաւորներուն։

● Բշ. 31 Դեկտ. — Տարեվերջի առիթով, Իսրայէլի Պետութեան Նախագահ Վսեմ. Հայիմ Հերցօգի ապարանքին մէջ կայացած քրիս- տոնէական համայնքապետերու աւանդական ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. և Տիար Գէորգ Հինդլեան։

digitised by A.R.A.R.@